

Ա. ՂԱՆԱԱՆՑԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՋՆԵՐԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԳՐԱՎՈՐ  
ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ինչպես ուրիշ երկրներում, այնպես էլ Հայաստանում, բանավոր ձեռով ստեղծված առածների ու ասացվածքների հետ միասին, որոնք կազմել են ժողովրդի ավանդական բանահյուսության տվյալ ժանրի հիմնական հարստությունը, գոյություն են ունեցել նաև գրավոր աղբյուրներից առաջ եկած առածներ ու ասացվածքներ: Դրանց համար հիմք են ծառայել տարրեր դարերի աշխարհիկ ու կրոնական, պատմական ու փիլիսոփայական, հրապարակախոսական ու գեղարվեստական զանազան գրական հուշարձանների (թե՛ ինքնուրույն և թե՛ թարգմանական) մեջ առկա բաղմաթիվ իմաստալից ասույթներ, պատկերավոր արտահյուսություններ կամ աֆորիզմներ, որոնք տարրեր ուղիներով ու ձեւերով մուտք դրելով բանավոր ավանդության մեջ և ձեռք բերելով բանահյուսական գույն ու երանդ, ժամանակի ընթացքում դարձել են ժողովրդական առածներ ու ասացվածքներ:

Դրավոր ասույթների ու աֆորիզմների նկրթափանցումը ժողովրդական բառ ու բանի մեջ, ընդհանրապես, ստեղծագործական բավական բարդ մի երեւույթ է: Այն տեղի է ունենում երկար ժամանակի ընթացքում, միջնորդավոր զանազան օղակներով: Այդ երեւույթը սերտորեն կարված է տվյալ ժողովրդի ապրած միջավայրի, նրա պատմական ճակատագրի, ուրիշ ժողովրդների հետ ունեցած քաղաքական, կուլտուրական շփման ու հարաբերությունների հետ:

Ժողովրդի մեջ սովորաբար ընդունելություն են գտնում ու տարածվում են այնպիսի գրավոր ասույթներ կամ աֆորիզմներ, որոնք իրենց բովանդակությամբ հարազատ ու համահնչուն են լինում նրա մեծամասնության աշխարհացրին ու աշխարհազդացողությանը, ճաշակին ու հոգեբանությանը, այնպիսի գրավոր ասույթներ կամ աֆորիզմներ, որոնք իրենց ատաղձով ու ակունքներով, ավել կամ պակաս շափով, կարված են լինում բանավոր խոսքի ավանդների հետ:

Դրա հետ միասին գրավոր աղբյուրներից հասարակական լայն շրջանների մեջ երբեմն թափանցում են նաև այնպիսի ասույթներ կամ աֆորիզմներ, որոնք դրսերում են տիրապետող դադափարախոսության ազգեցությունը և ժողովրդագի որոշ շերտերի աշխարհացրի դասակարգային ու պատմական սահմանափակությունը:

Հայաստանում հայտնի հնագույն գրավոր հուշարձաններից ժողովրդական առած-ասացվածքների համար նյութ են մատակարարել միջազգային ընույթի երեք հուշարձան, որոնք շնայած իրենց օտար ծագմանը, պատմական դեպքերի բերումով, տարածում ու ընդունելություն են գտել մեզանում:

Այդ հուշարձաններից առաջինը Աստվածաշունչն է իր Հին ու Նոր կտակարաններով:

Տասնյակ դարերի ընթացքում ստեղծված, մշակված ու խմբագրված մի զիրը է դա, որն արտացոլում է իր մեջ վաղնջական ժամանակների ժողովրդական առասպելների, ավանդությունների ու կրոնական սիստեմների բազմազան շերտավորումները: Քրիստոնեական միֆոլոգիայի այդ հանրագիտարանը հարուստ նյութ է տալիս հնագույն մի քանի ժողովուրդների, մասնավորապես Հին երրայեցիների, կյանքի ու կենցաղի, տնտեսական, քաղաքական հարաբերությունների, փիլիսոփայական հայացքների, իրավական նորմերի, հավատալիքների, միավական ու քնարական ստեղծագործությունների վերաբերյալ: Հին կտակարանը, ուր վերաբարովաված են հրեական ժողովրդի հեռավոր անցյալի գեղքերն ու գեմքերը, աշքի է ընկնում իր գերազանցապես աշխարհիկ բովանդակությամբ: Նոր կտակարանի համար, որը կտապված է քրիստոնեության առաջին շրջանի անց ու դարձերի հետ, ավելի բնորոշ են կրոնա-քարոյագիտական ու գեղագիտական ըմբռնումների, լեզվի ու գրականության վրա:

Անուրանալի է Աստվածաշնչի հնագույն ու տարածված գրավոր հուշարձաններից մեկը, Աստվածաշունչը դարեր շարունակ նշանակալից դեր է խաղացել քրիստոնեությունն ընդունած բազմաթիվ ժողովուրդների հոգեոր կյանքում, յուրովի ազգելով նրանց կրոնական հայացքների, ավանդական քանահյուսության, բարոյագիտական ու գեղագիտական ըմբռնումների, լեզվի ու գրականության վրա:

Շնորհիմ իր բազմակողմանի ու հարուստ բովանդակության, պարունակած հետաքրքիր և միաժամանակ պարզ ու մատշելի զրուցների, պատմվածքների, առակների ու երդերի, Աստվածաշունչը երկար դարերի ընթացքում տարածված գիրը է եղել Հայաստանում:

Աստվածաշնչի և մասնավորապես Ավետարանի մասին հայ ժողովրդի մեջ այն կարծիքն է եղել, որ դա իր տեսակի մեջ բացառիկ մի ստեղծագործություն է: «Գիրը շատ կա, ամմա մինն էլ Ավետարանին տեղը բռնիլ չի»— ասել են դարաբաղսի հայերը, ընդդեմ այն առավելությունը, որ ունեցել է նրանց աշքում Ավետարանը: «Ավետարանի կուղկեմնն է խոսում», — ասել են թիֆլիսեցի հայերը, երբ ուղեցել են ակնարկել մեկի ճշմարտախոս լինելը: Մի քանի ուրիշ վայրերում՝ ճշմարտություն, իմաստություն, ավետիք, բարի համբավ հայտնող մարդու համար ասել են. «Բերան չէ, Ավետարան է»: Շատ սովորական ու տարածված է եղել Հայաստանում «Ավետարանի կողին դրած խոսք» արտահայտությունը՝ անսուտ խոսք իմաստով:<sup>1</sup>

Աստվածաշունչն իր բաղկացուցիչ մասերով (Հին ու Նոր կտակարաններ, Ավետարան) Հայաստանում տարածվել է նախ հարյուրավոր գրչագիր օրինակ-

<sup>1</sup> Գ. Բարխուդարյան, Բարոյական առածներ, Տիֆլիս, 1898, էջ 12:

Գ. Տեր-Աղեքոսանդրյան, Թիֆլիսեցոց մտավոր կյանքը, Թիֆլիս, 1885, էջ 79:

Մտ. Մալիսայանց, Հայերեն բացառական բառարան, հ. Ա., Երևան, 1944, էջ 295:

ներով, իսկ ապա (տպագրական պյուտից հետո) տասնյակ գրաբար ու աշխարհաբար հրատարակություններով, որոնք լույս են տեսել զանազան ժամանակ, դանազան վայրերում:

Պատերազմի, գաղթի, տեղահանության և առհասարակ որևէ աղետի (հրդեհ, հեղեղ և այլն) ժամանակ, Հայաստանի բնակիչների առաջին հոգիւրից մեկը եղել է փրկել իրենց տան Աստվածաշունչը կամ Ավետարանը: Ժողովուրդը բերներերան և սերնդից-սերունդ հաղորդել է այն աննկուն շանքերի մասին, որ գործադրել են նրա զավակները՝ թշնամու կողմից գերմած Ավետարանն ազատագրելու համար:

Աստվածաշնչի աղղեցությամբ հնուց Հայաստանում ստեղծվել ու պատմվել են բազմաթիվ ժողովրդական ավանդություններ՝ Աղամի ու Եվայի, Նոյան տապանի ու ջրհեղեղի, Կայենի ու Արելի, Ռունառ կալի, Հորերանելու, Եղիա մարգարեի, Դավիթ թագավորի, Մարիամի ու Հովսեփի, Քրիստոսի ու նրա տուքյալների հրաշագործությունների մասին և ուրիշ նմաններ: Այդ ավանդություններից ու զրուցներից շատերը կապվելով Հայաստանի աշխարհագրական միջավայրի, ժողովրդի կենցաղի, հոգեբանության, նրա կյանքում տեղի ունեցած պատմական անց ու դարձերի հետ, ձեռք են բերել տեղային յուրահատուկ գծեր:

Նույն ճանապարհով Հայ ժողովրդի մեջ մուտք են գործել, տեղայնացվել, նրա բառ ու բանի հետ համապրվել ու ձուլվել են նաև հնագույն մի քանի ժողովուրդների բանահյուսությունից սերող աստվածաշնչյան բազմաթիվ պատմամեր ու թեավոր խոսքեր:

Դրան նորաստել է, նախ և առաջ, այն հանգամանքը, որ և՛ Աստվածաշունչի և՛ Ավետարանի լեզուն եղել է ո՛չ թե մեր որոշ մատյաններին հատուկ խրթին գրաբարը, այլ բավական պարզ ու հասկանալի գրավոր մի լեզու, որը քիչ է տարբերվել ժամանակի ընդհանուր խոսակցական լեզվից:

Պակաս կարենոր դեր շի խաղացել նաև այն հանգամանքը, որ հիշյալ հուշարձանները եղել են այն եղակի գրքերը, որոնք ընթերցվել են ոչ թե մի անդամ, այլ եկեղեցու միջոցով դարեր շարունակ պրոտագանդվել են հասարակական լայն շրջանների մեջ:

Հին կտակարանից ծագումն առած հայկական առածների ու ասացվածքների մեջ աշքի են ընկնում զլխավորապես մարդկային-հասարակական և կենցաղային հարաբերություններին ու երեսվթներին վերաբերող հիմնականում աշխարհիկ բնույթի ստեղծագործություններ: Դրանց համար հիմք են հանդիսացել զանազան մարդարեների ու առաքյալների պատվամները, Սիրաքի տուածները և հատկապես Սողոմոնի հոշակավոր առակները, որոնց հեղինակը մեզանում համարվել է խելքի ու իմաստության շափանիշ-օրինակ, նյութ զառնուալով բազմաթիվ ժողովրդական դրույցների ու ավանդությունների:

Խելքը մարդուն բնութագրելու և նրա նկատմամբ իրենց ունեցած դրական վերաբերմունքը բացահայտելու համար, Հայաստանի տարրեր գալառների ընակիչներն ասել են. «Խելք (խելքական) Սողոմոն իմաստունն է», «Սողոմոն իմաստունի խելքն ունի», «Սողոմոն իմաստունի քովեն կուգա» և այլն:

Սողոմոնին վերագրվող «առակ» կոչված այլարանական խոսքերից, երբեմն նրանց ավանդական հեղինակի անվան հիշատակմամբ («Սողոմոն իմաստունն ասել է» և ուրիշ ձեերով), իսկ հաճախ էլ առանց դրան, մեղանում, իբրև ժողովրդական առածներ կամ ասացվածքներ, դործ են ածվել շատերը:

Այդպիսիներից մեկն է, որինակ, «կաւ է բարեկամ մերձավոր, քան զեղքայր նեռաւոր»<sup>1</sup> առակը, որի խմասոն այն է թի՝ մարդկացին Հարաբերությունների մեջ հիմնականը ո՞չ թե արյունակցական կապն է, այլ հասարակական, կենցաղակին մոտիկությունը, մտերմությունը:

Սրա ժողովրդական՝ նմանակները Հայաստանում հայտնի են՝ «Մոտիկ Հարեւանը լավ ա, քանց հեռու բարեկամը», «կավ դրկիցը գեշ բարեկամեն լավ է», «Մոտակից Հարեւանը անսիրու ախապորից լավ ա» և նման ուրիշ ձևերով<sup>2</sup>:

Հայկական առածների շարքն անցած սողոմոնյան մի այլ առակ է՝ «Որ փորէ խորխորաս ընկերի իւրում՝ ինք լցցէ զնա»<sup>3</sup> բարոյախոսական խրատնախազդուշացումը՝ ուղղված շարագործ մարդկանց, որի նստատակն է դարձի բերել նրանց վատ ճանապարհից:

Սույն առակը մեղանում ասվում է ժողովրդական այս և նման տարրերակեներով. «Ուրբշի հոր փորողը, ինքը կընկնի մեջը», «Հոր փորողը՝ ինքը կընկնի մեջը», «Իր ձեռքով հոր փորէ, ինքը գեվեր ննդնի» և այլն<sup>4</sup>:

Սողոմոն իմաստունին վերագրված առակներից Հայաստանում տարածված է եղել նաև՝ «կաւ է անուն բարի, քան զմեծութիւն բազում, եւ քան զարծար եւ զուկի» առակը<sup>5</sup>, ուր հակադրված են իրար լավ անունն ու ունեցվածքը՝ առաջինի նախատպատվությամբ։ Արտահայտելով «բարի անուն» ունեցող ընշաղութել խավերի տրամադրությունները, այս առակը սիրով ընկալվել է մեր հասարակության լայն շրջաններում և ձեռք է բերել մեծ ժողովրդականություն։ Այն Հայաստանում հայտնի է հետեւյալ տարրերակներով. «Բարի անունը լավ ա, քանց աշխարհի դանձը», «կավ ա անուն բարի, քան դանձ աշխարհի», «Անունը թանկ արժեն, մալք ձեռքի կեզտ է», «Տուն ու տեղ սև փող շարժի, մարդին անունն է գովելի» և այլն<sup>6</sup>:

Սողոմոնի առակներից, Սիրաքի ասույթներից և Հին կտակարանի մյուս դրերից ծագած Հայկական առած-ասացվածքներից են նաև հետեւյալները. «Ունկուրին՝ շատ բարեկամ, շունկուրին՝ քիչ բարեկամ» ՀԱ<sup>7</sup>, 7 (ըստ Հին կտակարանի՝ «Բարեկամք մեծատանց բազումք»), Առակ, ԺԴ):

«Աշխարքի շինողն ու քանդողը լիդուն է», ՀԱ, 18 (ըստ Հին կտակարանի՝ «Մահ և կեանը ի ձեռս լեզուի», Առակ, ԺԲ):

«Հարուստին խոսքը անցուկ կըլլա, աղքատինը՝ մոռցուկ», ՀԱ, 7 (ըստ Հին կտակարանի՝ «Խօսեցաւ մեծատուն և ամեներեան լուցին», Սիրաք, ԺԳ):

«Ուրով ընկնողը կելնա, լեղվով ընկնողը շելնա», ՀԱ, 18 (ըստ Հին կտակարանի՝ «Հաւիս գայթակղել՝ քան ի լեզուէ», Սիրաք, Ի):

«Կալիս (անխառն) ոսկին բովքմք բելլու կանի» (Հայտնի դառնալ), ՀԱ, 46 (ըստ Հին կտակարանի՝ «Ի հուր փորձի ոսկի», Սիրաք, Բ):

«Պատեր ժուռ (աղոխ) կերան, թոռներուն ակռեն Հարվեցավ», «Հերերը ժուռ կերան, որդեկերանց ատամն առավ», ՀԱ, 11 (ըստ Հին կտակարանի՝ «Հարք աղոխ կերան և որդւոց ատամունք առան», Եղեկ., ԺԲ) և այլն:

<sup>1</sup> Հին կտակարան, Առակը Սողոմոնի, դլուխ ԺԲ:

<sup>2</sup> «Հայկական առածանի», 1951, էջ 8—9:

<sup>3</sup> Հին կտակարան, Առակը Սողոմոնի, դլուխ ԻԶ:

<sup>4</sup> «Հայկական առածանի», էջ 92:

<sup>5</sup> Հին կտակարան, Առակը Սողոմոնի, դլուխ ԻԲ:

<sup>6</sup> «Հայկական առածանի», էջ 126, 179:

<sup>7</sup> ՀԱ.—«Հայկական առածանի»:

Հին կտակարանի հետ միասին մեղանում ժողովրդական առածների ու ասացվածքների համար առատ նյութ է տվել նաև նոր կտակարանը կամ Ավետարանը: Մատթեոս, Մարկոս, Ղուկաս և Հովհաննես ավետարանիշներին վերագրվող մի շարք այլարանական և ուղղակի նշանակություն ունեցող արտահայտություններն ու ասուցիչները, իրեն «Ավետարանի կողին զրված» խոսքեր, երբեմն բառացի, երբեմն էլ փոփոխված ձևով, մտել են ժողովրդի մեջ և առածի կամ ասացվածքի կերպարանք ընդունելով ավանդվել քերանից բրան։

Անհրաժեշտ է, սակայն, նկատել, որ հակառակ Հին կտակարանյան առածնացվածքների, ուր գերիշխում է աշխարհիկ ոգին, Ավետարանից ծագած առածների ու ասացվածքների մեջ ավելի է զգալի կրոնա-բարոյախոսական տարրը, մի հանգամանք, որ բխում է հիշյալ երկու հուշարձանների բովանդակության առանձնահատկություններից։

Հայկական առածների շարքը ներթափանցած ավետարանական նմանօրինակ պատգամներից մեկն է՝ «Ու համբեւեցէ՝ ի սպառ՝ նա կեցցէ»<sup>1</sup> արտահայտությունը, տիպիկ քրիստոնեական մի բարոյախոսություն, որն ստեղծված է հասարակության ճնշված ու հալածված խավերին մխիթարելու, նրանց՝ հուսատությունից և մանավանդ ընդվզումից հեռու պահելու համար։ Մի բարոյախոսություն, որով եկեղեցու հայրերը դարեր շարունակ ձգտել են թմրեցնել աշխատավոր ժողովրդին հեռավոր ապագայի մշուշոտ անուրջով։

Այս պատգամը մեղանում ասվել է՝ «Համբերությունը կյանք է», «Համբերե, որ համ բերե», «Համբերե օր բերանդ համ դա» և այլ վարիանտներով<sup>2</sup>։

Նույն տիպի ավետարանական մի պատգամ է նաև «Հաւատք նո կեցուցին բեզ»<sup>3</sup> արտահայտությունը, որով քրիստոնեական եկեղեցին հորդորել է ժողովրդին հավատարիմ մնալու իր սկզբունքներին և կյանքում դժվարության հանդիսելիս՝ հենվելու հավատի վրա։

Այս պատգամի բանահյուսական խմբագրություններն են մեղանում՝ «Հավատ ունիս՝ շատ կապրիս» և «Անհավատ բանին մի հավատա» ասացվածքները<sup>4</sup>։

Վերոհիշյալ և նույն կարգի կրոնա-բարոյախոսական պատգամների հետ միասին, Ավետարանը նյութ է տվել նաև ոչ քիչ թվով աշխարհիկ բնույթի առածների ու ասացվածքների։ Ահա մի քանի նմուշ զրանցից։

«Իրան աշքի գերանը թողած, ուրիշի շոփն է ման գալի», «Իրան աշքի գերանը շի տեսնում, խալխի աշքի մաղն ա տեսնում», ՀԱ, 80 (ըստ նոր կտակարանի՝ «Հան նախ զգերանդ յականէ քումմէ, և ապա հայեցիս հանել զշիղն յականէ եղրօր քոյ», Մատ., է):

«Բերանը սրտին էվելցուկը կը զուրցէ», ՀԱ, 117 (ըստ նոր կտակարանի՝ «Ի յաւելուածոյ սրտի խօսի բերան», Մատ., ԺԲ): «Աւտը կուլ կուտան, մժղուկը կը քամին», ՀԱ, 190 (ըստ նոր կտակարանի՝ «զՄժղուկո քամմը և զուղտս կլանէք», Մատ. ԻԳ):

«Ծառն իր պտղեն կը ճանաշվի», ՀԱ, 129 (ըստ նոր կտակարանի՝ «Ծառի պտղոյ իւրմէ ճանաշի», Ղու., Զ): «Լացի վիրշը ուրախութին է», ՀԱ, 157 (ըստ նոր կտակարանի՝ «Երանի որ լան այժմ, զի ծիծաղեցին», Ղուկ., Զ) և այլն։

<sup>1</sup> Նոր կտակարան, Աւետարան ըստ Մատթեոսի, դլուխ Ժ:

<sup>2</sup> «Հայկական առածանի», էջ 106:

<sup>3</sup> Նոր կտակարան, Աւետարան ըստ Մատթեոսի, դլուխ Ժ:

<sup>4</sup> «Հայկական առածանի», էջ 152:

Աստվածաշնչից փոխ առնված իր առածների ու ասացվածքների մեջ՝ հայ ժողովուրդը բնդհանուր առմամբ համատարիմ ու հարազատ է մնացել վերջիններիս հիմքն հանդիսացող ասույթների բովանդակությանն ու էական իմաստին, և խմբագրել ու փոխել է պլխավորապես դրանց ձեզ (լեզուն, ոճը). Սակայն եղել են զեպքեր էլ, երբ նա երկրայությամբ ու քննադատությամբ վերաբերվելով «Ավետարանի կողին զրված» այս կամ այն խոսքի զաղափարական բովանդակությանը, փոխել է այն, դնելով նրա մեջ նոր իմաստ ու ըմբանում:

Այսպիս, օրինակ, Աստվածաշնչյան «Աստուած ողորմած է» հայտնի արտահայտությունը<sup>1</sup>, որը մեզանում տարածված է եղել «Աստված ողորմած է», «Աստուց մինձ, օղորմութինը շատ», «Աստոծ մեծ ա, ողորմությունը հազար» և այլ տարածված ձևերով<sup>2</sup>, ունի նաև «Աստված ողորմած է, ըսողը անոթի կը մնա», «Աստված ողորմածը՝ խեղճ մարդը մոգոնած է»<sup>3</sup> այլիմաստ ձևերը<sup>4</sup>, որոնց բովանդակությունը տրամադրեն հակադիր է աստծու ողորմածության վերաբերյալ եղած կրոնական ըմբռնմանը և զրակորում է աշխատավորական խավերի մեջ խմբովող աթեխտական տրամադրությունները:

Այսպիսաս բնորոշ մի ուրիշ օրինակ է՝ «Աստված արու և էզ արար, բա վարդապետներին ո՞վ արար»<sup>5</sup> ժողովրդական սրամիտ հարցում-ասացվածքը՝ Հորինված Նոր կտակարանի՝ «Աստուած արու և էզ արար»<sup>6</sup> արտահայտության կապակցությամբ, որի մեջ բացահայտված է ժողովրդի բացասական վերաբերմունքը Հոգեսոր պաշտոնյաների նկատմամբ:

Նոր կտակարանից ծագող «Համբերությունը կյանք է» վերելում հիշված ասացվածքի հետ միասին, հայ ժողովուրդը ստեղծել ու գործ է ածել նաև «Ավելի համբերությունը իշխ մարտիրոսություն է»<sup>7</sup> ասացվածքը, որի մեջ զրսերվել է սպաված համբերությամբ ժողովրդի մարդկանց ընդվզումը գործնական կյանքում իրեն շարդարացրած տվետարանական պատզամի դեմ:

Աստվածաշնչից հետո, հայկական առածների ու ասացվածքների համար կարենու ազբյուր են հանդիսացել անտիկ աշխարհի նշանավոր իմաստասերներից՝ Արիստոտելի, Սոկրատի, Պլատոնի, Էպիկուրի, Դիոգինեսի և մյուսների ասույթները կամ աֆորիզմները, որոնք մեզանում հայտնի են եղել «արտաքնոց» կամ «Նախնի իմաստասիրաց» «բանք» ընդհանուր կոշումով («Բանք խրատականք», «բանք իմաստասիրաց», «բանք խրատուց» և այլն):

Հիշյալ հեղինակների ամբողջական դործերի հետ միասին այդ «բանքերը» շատ վաղ շրջանում (5—6-րդ դարեր)<sup>8</sup> թարգմանվել են հայերեն և մեծ ու փոքր շարքերով, ձեռադրից-ձեռադիր ու դարից-դար անցնելով հասել են մինչև մեր օրերը<sup>9</sup>:

<sup>1</sup> Հին կտակարան, Բ օրենք, դլուխ Դ:

<sup>2</sup> «Հայկական առածանի», էջ 149:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 152:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 154:

<sup>5</sup> Նոր կտակարան, Աւետարան բառ Մարկոսի, դլուխ Ժ:

<sup>6</sup> «Հայկական առածանի», էջ 106:

<sup>7</sup> Հ, Հակոբ Բագրատիոն, Տառապական մանր ուսումնասիրությունը, մասն Ա, Վիեննա, 1895, էջ 213—218:

<sup>8</sup> Միայն Երեսնի Պետական Մատենադարանում այդ շարքերի թիվը 50-ից ավելի է: Համ իրենց զրչության ժամանակի դրանք վերաբերում են 13—19-րդ դարերին: Առանձնապես շատ են 17—18-րդ դարերի ձեռադրերը:

Քննության առարկա ստեղծագործությունները աշքի են ընկնում իրենց բազմազան ու հետաքրքիր բովանդակությամբ, արծարծած՝ հասարակական, բաղաքական, բարոյական, կենցաղային խնդիրներով (իշխանություն, օրենք, ունեցվածք, փող, իմաստություն, ուսում, բարեկամություն, արիություն, դաստիարակություն, պատիկ, փառք, բախտ, գեղեցկություն, կյանք, ժահ): Նրանց մեջ սուր քննադատության է ենթարկված մարդկային ազահությունը, շողոքորթությունը, երեսպաշտությունը, խորամանկությունն ու նենդությունը, գրվառված են ազնվությունն ու արդարությունը, շիտակությունն ու անաշառությունը և այլն: Ունենալով սեղմ ծավալ, ժողովրդական բառ ու բանն հիշեցնող պատկերավոր ու աֆարիստական ձև, նրանք հեշտ ընկալիլ ու արմատ են բռնելարդիկանց հիշողության մեջ:

Անտիկ աշխարհի իմաստասերների «Բանք»-երի հայ գրչագիր մատյաններում գրաված մեծ տեղը բացատրվում է նրանց բովանդակության ու ձեր նըշված հատկություններով: Նույն այդ հատկությունների շնորհիվ էլ նրանք գրչագիր մատյաններից թափանցել են նաև ժողովրդական բանավոր խոսքի սահմանները, մտել հասարակական ավելի լայն շրջանների մեջ և բերանից-բերանու սերնդից-սերունդ հազորդվելով ու փոփոխվելով վեր են ածվել ժողովրդական առած-ասացվածքների: Վերջիններիս մի շարք նմուշները մենք գտնում ենք Հայաստանի տարբեր շրջաններում և հայաբնակ զանազան վայրերում դրի առնված առածների մեջ: Բերենք մի քանի օրինակ.

«Աղքատը հացի կարոտ է, հարուստը՝ ամեն բանի», ՀԱ, 7 (ըստ Սրբառութելի՝ «Աղքատութիւն բազում ընչից է կարօտ, իսկ ագահութիւն ամենայնի», Սով., 24):

«Էացացնողիդ կշտին կաց, ծիծաղացնողից փախ», կամ՝ «Նստիր էնոր կուշտ, որ լացու, մը նստիր էնոր կուշտ՝ որ խնդացու», ՀԱ, 127 (ըստ Պլուտարքոսի «Խնդող պարտ է ընդ՝ արտմեցուցանելն, քան ընդ շողմողելն», Սով., 42):

«Իր դադրը (հարդը) շղիացողը, ուրիշինը ո՞նց կիմանա». ՀԱ, 126 (ըստ նույնի՝ «Որ վասն անձին անբարի խորհի, այլում բարի ոչ կարէ խորհել», Սով., 9):

«Ճղլղանից շեն վախենա, սուս ու փուաից կը վախենան». ՀԱ, 72 (ըստ Սոկրատի՝ «Ե լոելութենէն պարտ է առավել երկնշել, քան թէ ի ձայնէն», Սով., 37):

«Սրաւանց բարեկամը սև օրվան համար ա» կամ՝ «Բարեկամը նեղ օրին կը ճանչցվի». ՀԱ, 9 (ըստ Երինոսի՝ «Բժիշկ և բարեկամ զայն համարեա, որ ի նեղութեան օգնել կարեն», Սով., 50) և այլն:

Հայկական առածների ու ասացվածքների համար աղբյուր ծառայած մյուս հնագույն գրավոր հուշարձաններից, անհրաժեշտ է հիշատակել նաև Խիկարի իմաստունի Հայտնի «Պատմությունը», ուր նկարագրված է Ասորեստանի Սեներիմ արքայի նախարար ու դպիր՝ խորագիտ ու բազմահմուտ Խիկարի կյանքը և բերված են նրա բազմաթիվ կենսական, բարոյագիտական, կենցաղային ու այլ կարգի խրատները ուղղված իր որդեգիր Նաթանին: Կրելով իր վրա ավանդությունը և հաջորդ՝ «Բանք»-երը բերում ենք «Սովերը հայկականք»-ի Ա. գրքից (1853 թ., Վենետիկ), ուր «Բանք խրատուց նախոնի իմաստասիրաց» ընդհանուր վերնագրի տակ ապագրված են բազմաթիվ այդպիսի «Բանքեր» (էջ 9—70), որոնք քաղված են՝ «Հինգ և ավելի» գրչագիր մատյաններից:

<sup>1</sup> Այս և հաջորդ՝ «Բանք»-երը բերում ենք «Սովերը հայկականք»-ի Ա. գրքից (1853 թ., Վենետիկ), ուր «Բանք խրատուց նախոնի իմաստասիրաց» ընդհանուր վերնագրի տակ ապագրված են բազմաթիվ այդպիսի «Բանքեր» (էջ 9—70), որոնք քաղված են՝ «Հինգ և ավելի» գրչագիր մատյաններից:

դական բանահյուսության անժխտելի կնիքը, գրավոր այս հուշարձանը իր մի շաբաթ մոտիվներով սերտորեն կապված է Հին ու Նոր կտակարանների հետ: Ակնհայտ ու աներկրայելի է Հատկապես Խիկարի խրատների և Հին ու Նոր կտակարանների մեջ առկա առակների նմանությունը: Որոշ առնշակցություն է նկատված նաև Խիկարի «Պատմության» և «Հաղար ու մեկ գիշերներ» հայտնի հեքիաթաշարքի մեջ:

Նախ Արևելքում, ապա նաև եվրոպական ազգերի մոտ լայն տարածում դասձ այս երկը շատ հնուց ժողովրդականություն է վայելել նաև Հայաստանում: Թեև մինչև այժմ չի պարզված Խիկարի «Պատմության» հայերեն թարգմանության թվականը, բայց այն ընդհանուր առմամբ համարվում է մի հին բնագրի (ասորի կամ հույն) թարգմանություն, հար և նման հայերեն ուրիշ շատ շին թարգմանությունների<sup>1</sup>:

Խիկար իմաստունի «Պատմության» Հայաստանում վայելած մեծ ժողովրդականության մասին են վկայում աշխարհի զանազան մատենադարաններում ցովտծ նրա բազմաթիվ հայերեն գրչագիր օրինակները և մասնավորապես Երևանի Պետական Մատենադարանում պահպանված նրա մի քանի տասնյակ ձեռագրերը՝ «երատք Խիկարայ իմաստոյ, զոր ետ քրոջ որդոյն իւրոյ նախայ» և ուրիշ վերնադրերի տակ, որոնք վերաբերում են 14, 17, 18 և 19-րդ դարերին:

Այդ են վկայում նաև Խիկարի «Պատմության» մի շաբթ հայերեն հրատակությունները՝ լույս տեսած զանազան ժամանակ (1708, 1731, 1792, 1820, 1834, 1857, 1898 թթ.) զանազան վայրերում (Պոլիս, Թիֆլիս, Լոնդոն):

Հարուստ ու բազմազան է Խիկար իմաստունին վերագրված խրատների յուլմանդակությունը: Նրանց մեջ սրբամտորեն մերկացված է մասնավոր սեփականատիրական կարգերում իշխող հասարակական կարծիքի դասակարգային աշառու ու կողմնակալ բնույթը, դատապարտված են կովարար ու արյունառուցու, ապահ ու աշքածակ, տղետ ու ամբարտավան մարդիկ, մեծարված ու զնահատված են խելոքներն ու իմաստունները, վեր է հանված խոհեմությունը, համեստությունը և մարդկային այլ առաքինություններ:

Ինչպես նշվեց վերևում, Հայաստանում մեծ տարածում է ունեցել Խիկարի «Պատմությունը», իսկ նրա հերոսը վայելել է լայն ժողովրդականություն ու համբավ: Խելոք մարդուն բնորոշելու համար մեզանում հաճախ ասել են՝ «Խիկարի պես իմաստուն է», «Խիկարի խելքն ունի», «Խիկարի պես խելացի խրատներ կուտա», «Թե հերը Սողոմոն իմաստունն է, տղեն Խիկարի խելքն ունի» և այլն<sup>2</sup>:

Բայց այսօք էլլ Խիկարի խրատները դարձել են ժողովրդական առածներ ու ասացվածքներ և իրեն այդպիսիք մտել հասարակական շրջանառության մեջ:

Վաղարշապատի, Աշտարակի, Օշականի, Շիրակի, Ախալցխայի, Թիֆլիսի, Զանգեզուրի, Ղարաբաղի, Պոլսի, Ալաշկերտի, Վանի, Մոկանի, Դիմրիքիրի հայերի կողմից ասված Խիկարյան այդպիսի առած-ասացվածքներից են Հետելյանները և բազմաթիվ ուրիշ նմաններ:

<sup>1</sup> Հ. Հակոբյան, Պ. Տաշիրյան, Մատենադարական ժանր ուսումնասիրությունը, մասն երկրորդ, Վիեննա, 1901, էջ 123—128:

<sup>2</sup> Ստ. Մալիսասանց, Հայերեն բացատրական բառարան, հատոր Բ, Երևան, 1944, էջ 263 և այլուր:

«Աղքատին տղան օձ կերավ, ըսին՝ անօթի էր. հարըստին տղան կերավ, ըսին՝ դեղ էր» կամ՝ «Հարուստ մարդը օձ կերավ, ասին՝ դեղ ա, աղքատը կերավ, ասին՝ սովոծ ա», ՀԱ, 6 (ըստ Խիկարի՝ «Մեծատան որդին թէ օձ ուտէ՝ կասեն թէ վասն բժշկութեան կերաւ և թէ աղքատն ուտէ՝ կասեն թէ սովալուկ մեռանելոյն կերաւ, ԳՊ, 102):<sup>1</sup>

«Իմաստունի հետ քար քաշե, հիմարի հետ փլավ մի ուտի» կամ՝ «Խելոք մարդու հետ քար կրելը լավ է, քանց գժի հետ փլավ ուտելը», ՀԱ, 58 (ըստ Խիկարի՝ «Ճաւ է իմաստուն մարդոյն հետ քար կրելն, քան զանգետին հետ նիստ՝ որ ասեն՝ թէ եկու ի վեր», ԳՊ, 94):

«Ինչ որ ասես, էն կը լսես», ՀԱ, 91 (ըստ Խիկարի՝ «Մի ասեր և մի լսեր», ԳՊ, 108):

«Աշքածակի աշքը մենակ հողով կը կշտանա», ՀԱ, 69 (ըստ Խիկարի՝ «Աշք մարդոյ ագահ է, ոչ կշտանայ դանձով՝ մինչև լցի հողով», ԳՊ, 96):

«Ճարը նստի, որ վերեր քեզ տեղ տան», ՀԱ, 55 (ըստ Խիկարի՝ «Ի վայր նիստ՝ որ ասեն՝ թէ եկու ի վեր», ԳՊ, 94):

«Արին թափողը՝ արնով էլ կեթա», ՀԱ, 93 (ըստ Խիկարի՝ «Մի հեղուր զարին մարդոյ, զի մի այլքն հեղձցեն զարին քո», ԳՊ, 94):

Այսպես և շատ ուրիշներ:

Կարելի է հիշատակել ուրիշ գրավոր հուշարձաններ ևս, որոնք նյութ են տվել Հայկական առածներին, սակայն զրանց գերը տվյալ գեպօւմ երկրորդական է, ուստի բավարարվենք բերվածով:

Թննության առարկա գրավոր ասույթների կամ աֆորիզմների ժողովրդականացման գործում, քացի այդ ասույթները կամ աֆորիզմները սպարունակող երկերի հայերեն թարգմանություններից, զգալի գեր են խաղացել նաև տարբեր դարերի հայ պատմիշներն ու գրողները: Իրենց գրվածքներում զանազան առիթներով մեջ բերելով հիշյալ ասույթները կամ աֆորիզմները, նրանք զրանով իսկ նոպաստել են վերջիններիս տարածմանը՝ դառնալով յուրահատուկ միջնորդներ:

Հայ պատմիշների ու գրողների պատմա-հայրենասիրական ու այլ տիպի գործերի ընդհանուր բովանդակության հետ այդ ասույթները կամ աֆորիզմները գրագետ մարդկանց միջոցով թափանցել են ժողովրդի մեջ և ստեղծագործութար յուրացվել նրա կողմից: Այսպես, օրինակ.

Հին կտակալունի՝ «Որ փորէ խորխորատ ընկերի իւռում՝ ինք լցցէ զնա» հայտնի առակը գտնում ենք՝ Եղիշեի, Դրասխանակերտցու և Ռևտանեսի մոտ (ընցա էր փորեալ զիորխորատ, դուք ընդէ՛ր լցէք յառաջադրուն), «Եւ այսպէս դուքն զոր եւ փորեաց եւ պեղեաց Հասան, ի նոյն ընկլուզաւ զոր եւ գործեաց», «Գուրն զոր փորեաց եւ պեղեաց՝ ինքն անկցի ի խորխորատնց ձեւրով»):<sup>2</sup>

Հայ ժողովրդի մեջ այս առակը, ինչպես նշվեց վերենում, տարածված է՝ «Ուրիշի հոր փորողը, ինքը կընկնի մեջը» և այլ նմանակներով:<sup>3</sup>

Խիկարի ոչ պակաս հայտնի՝ «Ուրիշակ, եղեր ինձ որպես կացին՝ որ կտրէր

<sup>1</sup> «Գիրք պատմութեան որ կոչի Պղնձէ քաղաք և Բանք խրատականք և օգտակարք Խիկարայ իմաստնոյ, և այլ բանք պիտանիք», կ. Պոլիս, 1792:

<sup>2</sup> Եղիշե, Վենետիկ, 1889, 42, չորրեց. կթ գ., Երուսաղեմ, 1867, 241, Ու խ աշնէս, Եղմիածին, 1871, 74:

<sup>3</sup> «Հայկական առածանի», էջ 10:

գծառն: Ասէ ծառն. երէ յինէն շէիր՝ ոչ յաղբէիր դուք խրատը, Վարդան Այգեկցու առակներից մեկի մեջ օգտագործված է հետեւյալ ձևով. «Հիւտունք մտան ի մայրիս եւ սկսան կոտորել զծառ եւ զտումկ. եւ նոքա հառաշելով ասեն՝ Զի՞նչ է այս զոր գործն ընդ մեզ: Եւ նոճին ասէ. Վայ է մեզ, ով եղբարք, ոի ի մհկանէ (է) որ կտրէ զմեզ. զի կոթն ի մայրոյս է»<sup>1</sup>:

Հայ ժողովրդի մեջ Խիկարյան վերոբերյալ խրատը զործածվել է՝ «Մառը զանգատ զնաց աստծու մոտ կացնիցը որ իրան կըտրում ա, ասեց՝ կոթը քեզպանից ա», «Մառը կացնի կոթ չը տար, իրան մահ ու մեռ շըկար» և այլ նմանակներով<sup>2</sup>:

Այսպես և շատ ուրիշներ:

Բերդած փաստերը տկնառու կերպով ցուց են տալիս աստվածաշնչյան և մյուս գրավոր ասույթների ու մեր բազմաթիվ ժողովրդական առած-ասացվածքների միջև գոյություն ունեցող նմանությունները:

Ճիշտ չեր լինի կարծել, թե այդ բոլոր նմանությունները այն սովորական դուդադիպություններից են, որպիսիք Հաճախ Հանդիսում են և՛ գրականության և՛ մանավանդ ժողովրդական բանահյուսության մեջ: Նմանօրինակ տռանձին դուդադիպությունների հնարավորությունն, իհարկե, չի կարելի բացառել: Սակայն տվյալ դեպքում մենք դործ ունենք ոչ թե այդպիսի մոտավոր, սովորական դուդադիպությունների, այլ, հիմնականում, բառացի ու տեքստուալ համընկումների ու նույնությունների հետ:

Աստվածաշունչը, անտիկ աշխարհի իմաստասերների «Բանքերը» և Խիկարի «Պատմությունը» միշաղգային բնույթի այն գրավոր սկզբնաղբյուրներն են, որոնց զդալի ազդեցությունը դիտված է թե՛ արևելյան և թե՛ եվրոպական ժողովուրդների ավանդական բանահյուսության և բառ ու բանի վրա:

Ուրիշ ժողովուրդների հետ միասին հայ ժողովուրդը ևս յուրացրել է քննության առարկա դրավոր հուշարձանների միշոցով իրեն հասած հին երայեցիների և հնադարյան մի երկու ուրիշ ազգերի (ասորիներ, Հույներ) թևավոր խոսքերն ու պատկերավոր արտահայտությունները և ստեղծագործաբար վերամշակելով դրանք մտցրել է իր բնաշխարհիկ առածների ու ասացվածքների շարքը:

Այդ խոսքերի ու արտահայտությունների, մեջ նու գտել է իրեն հուզող հասարակական, բարոյական, կենցաղային, կրոնական շատ հարցերի պատասխանը, արտահայտված ժողովրդական մտածողությանն հատուկ հարազատ ու հասկանալի ձևերով:

<sup>1</sup> Ե. Մառ, Ժողովածոյք առակաց Վարդանայ, հատ. Բ, 123:

<sup>2</sup> Հայկական առածանիւթ, էջ 10: